ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

« »_____ 20 թ. N_____

Մամուլի հաղորդագրություն 28, սեպտեմբեր, 2017 թվական

Հայտարարություն Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամում թափուր հաստիքների մրցույթի մասին

Գյուղատնտեսության զարգացման հիմնադրամը հայտարարում է բաց մրցույթ Հիմնադրամի մարզային կառույցների (Արագածոտն, Արարատ, Արմավիր, Գեղարքունիք, Լոռի, Կոտայք, Շիրակ, Սյունիք, Վայոց ձոր, Տավուշ) ղեկավարների, մարզային կառույցների հաշվետար օգնականների, տվյալների հավաքագրման և գնահատման մասնագետների, մարզային կառույցների խորհրդատուների հաստիքների համար:

Հիմնադրամը հրավիրում է մրցույթի պահանջներին համապատասխանող բոլոր անձանց ներկայացնել մրցույթի մասնակցության դիմումները:

Հետաքրքրված անձինք դիմումի հետ միաժամանակ պետք է ներկայացնեն ինքնակենսագրական թերթիկ, անձնագրի կամ նույնականացման քարտի պատճենը, ինչպես նաև ցանկության դեպքում այլ տեղեկատվություն՝ համապատասխան որակավորում ունենալու և այլնի վերաբերյալ:

Դիմումների և անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման ժամկետներն են՝

1. Մարզային կառույցների ղեկավարների բաց մրցույթի համար՝ մինչև 2017 թվականի հոկտեմբերի 9-ը՝ ժամը 15:00-ն,

2.մարզային կառույցի հաշվետար օգնականների, տվյալների հավաքագրման և գնահատման մասնագետների, մարզային կառույցի խորհրդատուների համար՝ մինչեւ 2017 թվականի հոկտեմբերի 11-ը՝ ժամը 15:00-ն:

Մանրամասն՝ կից տեսանյութում և կայքէջում՝

https://www.youtube.com/watch?v=bCMHNwJLku8&feature=youtu.be

ՀՀ գյուղատնտեսության նախարարության տեղեկատվության

և հասարակայնության հետ կապերի բաժին

0010, ք. Երևան, Կառավարական տուն 3 հեռ. (374 10) 52 46 41, ֆաքս. (374 10) 52 46 10
էլ. փոստ agro@minagro.am